ՀՀ հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի №422Ն որոշմամբ

Էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-6(10) կՎ և բարձր լարման ցանցերից սնվող Սպառող (բացառությամբ՝ բնակչության))

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N ԼՊ0056

ք.Երևան — «22» 05 2014 թ.
(կնքման վայրը)

Մատակարարը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
(ընկերության անվանումը)

(մասնաճյուղի անվանումը)

ի դեմս գլխավոր տնօրեն Ե.Բիբինի
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Սպառողը՝ ՀՀ Դատախազություն
(ընկերության անվանումը)

ի դեմս՝ աշխատակազմի ղեկավար Հ.Նավասարդյանի
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավորվում է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը պարտավորվում է վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Կողմերը պարտավոր են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N358Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով» (այսուհետ՝ ԷՄՕԿ) և սույն պայմանագրով:

2.2. Մատակարարը պարտավոր է.

1) մատակարարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N1925Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված որակի էլեկտրական էներգիա.

2) ապահովել էլեկտրական էներգիայի մատակարարումը Սպառողին՝ սույն պայմանագրին կցված էլեկտրամատակարարման սխեմայով նախատեսված հուսալիությամբ.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպառողական կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին, եթե տեղեկացման այլ կարգ նախատեսված չէ սույն պայմանագրի 9-րդ գլխում.

4) Սպառողի դիմելու դեպքում 1-80 հեռախոսահամարով տրամադրել շուրջօրյա տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս դիմում-բողոքների և հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

5) վճարման փաստաթղթում գրառումների սխալ հայտնաբերելու կամ Սպառողից այդ մասին դիմում ստանալու դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել Սպառողին, սխալի առկայության (հաստատման) դեպքում ուղղումը հաշվի առնել ընթացիկ ամսվա համար ներկայացվող վճարման փաստաթղթում.

6) Սպառողի պահանջով ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտությունը և ներկայացնել դրա աշխատանքի ճշտության մասին գրավոր եզրակացությունը.

7) առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված ծախսերը կատարել իր միջոցներով, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի.

8) փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքերը ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով, և համապատասխան փոփոխություններ կատարել սույն պայմանագրում (N1 հավելված).

2.3. Սպառողը պարտավոր է.

1) վճարել յուրաքանչյուր ամսվա ընթացքում իր սպառած էլեկտրական էներգիայի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով.

2) շահագործել իր էլեկտրաէներգետիկայանքները Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N1925Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան:

3. Կողմերի օպերատիվ փոխհարաբերությունները

3.1. Կողմերը պարտավոր են ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում կնքել Սպառողի սարքավորումների և ռելեական պաշտպանության ու ավտոմատիկայի սարքվածքների Մատակարարի օպերատիվ կառավարմանը հանձնման համաձայնագիր, որը կցվում է սույն պայմանագրին:

3.2. Մատակարարը և Սպառողը պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբերի 20-ը միմյանց ներկայացնել Մատակարարի և Սպառողի իրավասու անձանց կողմից հաստատված՝

1) օպերատիվ խոսակցություններ վարելու իրավունք ունեցող աշխատակիցների ցուցակը.

2) օպերատիվ խոսակցություններ վարելու և փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող օպերատիվ անձնակազմի ցուցակը:

3.3. Մատակարարը պարտավոր է.

1) իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող Սպառողի սարքավորումների և ռելեական պաշտպանության ու ավտոմատիկայի սարքվածքների օպերատիվ կարգավարումը իրականացնել հիմք ընդունելով այդ սարքավորումների և սարքվածքների տեխնիկական անձնագրով սահմանված հարաչափերը.

2) Սպառողի օպերատիվ անձնակազմի պահանջով տրամադրել տեղեկություններ Սպառողի էլեկտրամատակարարման արտաքին ցանցի և սնող գծերի էլեկտրական հարաչափերի (բեռ, լարում և այլն) վերաբերյալ.

3.4. Սպառողը պարտավոր է.

1) ապահովել փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող Մատակարարի օպերատիվ անձնակազմի շուրջօրյա անարգել մուտքը իր տնօրինության տակ գտնվող տարածքները՝ իրենց իրավասությունների սահմաններում պարտականությունների կատարման նպատակով.

2) անհապաղ հայտնել Մատակարարին նրա օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումներում և ռելեական պաշտպանության ու ավտոմատիկայի սարքվածքներում ի հայտ եկած թերությունների և անսարքությունների մասին 1-80 հեռախոսահամարով:

3.5. Սույն գլխի դրույթները տարածվում են այն Սպառողների վրա, որոնց սարքավորումները և ռելեական պաշտպանության ու ավտոմատիկայի սարքվածքները գտնվում են Մատակարարի օպերատիվ կառավարման և (կամ) վարույթի ներքո:

4. Սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի հաշվարկը, դրա վճարման կարգը

4.1. Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

4.2. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

4.3. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

4.4. Առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին և հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սույն պայմանագրի 9-րդ գլխում նախատեսված է առևտրային հաշվիչի ցուցմունքը Սպառողի ներկայությամբ գրանցելու Մատակարարի պարտավորությունը, ապա վերջինս պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով տեղեկացնել Սպառողին առևտրային հաշվիչի ցուցմունքի գրանցման օրվա և ժամի մասին: Սպառողի չներկայանալու դեպքում Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել առանց Սպառողի:

4.5. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնների (N3 հավելված) և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով:

4.6. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը պարտավոր է վճարել իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին համապատասխան տեղեկատվությունը սույն պայմանագրի 2.2 կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղադրվելուց, իսկ սույն պայմանագրի 9-րդ գլխով տեղեկացման այլ կարգ նախատեսված լինելու դեպքում այդ կարգով տեղեկացվելուց հետո 7 օրվա ընթացքում:

5. Սպառողի էլեկտրամատակարարման ընդհատման, դադարեցման և վերականգնման պայմանները

5.1. Մատակարարն պլանային-նախազգուշական աշխատանքներ կատարելու նպատակով իրավունք չունի հոսանքազրկել (իրականացնել պլանային ընդհատում) այն Սպառողներին, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 (10) կՎ և բարձր լարման 1-ից ավելի աստիճանի օդային կամ մալուխային գծերով կայանի կամ ենթակայանի երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից:

5.2. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի ԷՄՕկ-ով սահմանված կարգով:

5.3. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր պահանջով և առաջարկված ժամկետում.

2) մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունն ապահովելու համար՝ տեխնիկական կանոնակարգերով սահմանված դեպքերում.

3) Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում:

5.4. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը ԷՄՕկ-ով սահմանված դեպքերում և կարգով:

5.5. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատման դեպքում պարտավոր է վերականգնել էլեկտրամատակարարումը ԷՄՕկ-ով սահմանված ժամկետներում, իսկ եթե Սպառողի էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, ապա՝ այդ ժամանակահատվածում, որը Կողմերը պարտավոր են սահմանել սույն պայմանագրի 9-րդ գլխում:

5.6. Մատակարարը վերականգնում է Սպառողի էլեկտրամատակարարումը առանց վերջինիս նախազգուշացնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ նախազգուշացնելու պահանջը սահմանված է սույն պայմանագրի 9-րդ գլխում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕկ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագրի 2.2. կետի 1-ին և 2-րդ ենթակետերի խախտման դեպքում Մատակարարը Սպառողին վճարում է տույժ, որի չափը սահմանում են Կողմերը սույն պայմանագրի 9-րդ գլխում:

6.3. Սույն պայմանագրի 2.3. կետի 2-րդ ենթակետի խախտման դեպքում Սպառողը Մատակարարին վճարում է տույժ, որի չափը սահմանում են Կողմերը սույն պայմանագրի 9-րդ գլխում:

7.Ֆորս մաժորային իրավիճակներ

7.1. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն չեն կրում, եթե դա հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (ինչպես օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը), որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությունը կամ հանգեցնում են նրանց ստանձնած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ անկախ նրանց կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

7.2. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

8. Լրացուցիչ պայմաններ

8.1. Սպառողը պարտավոր է ենթապատառողի կամ Մատակարարի այլ ցանցերի էլեկտրամատակարարումն ապահովելու համար իր էլեկտրատեղակայանքներով հաղորդել Մատակարարի էլեկտրաէներգիան, իսկ Մատակարարը պարտավոր է փոխհատուցման պայմանագրով սահմանված կարգով վճարել Հանձնաժողովի սահմանած մեթոդիկայով հաշվարկված Սպառողի մատուցած ծառայության վճարը:

8.2. Սպառողի էլեկտրատեղակայանքներին միացված ենթապատառողի առկայության դեպքում սույն պայմանագրի N1 հավելվածում նշվում են ենթապատառողի առևտրային հաշվառքի սարքի վերաբերյալ տվյալները, իսկ N2 հավելվածում՝ ենթապատառողի և Սպառողի էլեկտրատեղակայանքների սահմանազատման կետը:

8.3. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N1 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

8.4. Սպառողի կողմից վերստուգիչ հաշվառքի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի N1 հավելվածում:

8.5. Վերստուգիչ հաշվառքի սարքի (հաշվիչի) գուցմունքի գրանցման և էլեկտրական էներգիայի հաշվարկներում կիրառման կարգը սահմանում են Կողմերը սույն պայմանագրի 9-րդ գլխում:

8.6. Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով նախատեսված դեպքերում Կողմերը պարտավոր են սույն պայմանագրին կցել անհրաժեշտ մաս հանդիսացող տեխնոլոգիական և(կամ) վթարային հոսքերությունների ամրագրման վերաբերյալ ակտ, որը կազմվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի փետրվարի 21-ի N9Ն որոշմամբ հաստատված էլեկտրամատակարարման անխոչընդոտության սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգի համաձայն:

8.7. Երբ նվազագույն բեռնվածքի ռեժիմներում տեխնիկապես անհնար է առևտրային հաշվառքի սարքերի բնականոն աշխատանքը, ապառված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվարկվում է նվազագույն բեռնվածքի ամբողջ

ժամանակահատվածում փաստացի միացված էլեկտրական ընդունիչների հզորության հիման վրա և ավելացվում առևտրային հաշվիչի ցուցմունքով հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը: Նվազագույն բեռնվածքի ժամանակահատվածի տևողությունը և այդ ժամանակահատվածում միացված գումարային բեռնվածքի մեծությունները, դրանց հաշվարկի կարգի հետ միասին, համաձայնվում են սույն պայմանագրին և վերանայվում յուրաքանչյուր տարի կամ Կողմերից մեկի գրավոր պահանջով տարվա ընթացքում՝ նվազագույն բեռնվածքի փոփոխման դեպքում:

8.8. Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանագատման կետերում տեղադրել էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր:

8.9. Սույն պայմանագրի 8.8 կետում նախատեսված էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր տեղադրելու դեպքում, Կողմերը այդ մասին կազմում են երկկողմանի ակտ, որն կցվում է սույն պայմանագրին:

9. Այլ պայմաններ (լրացնում են Կողմերը)

9.1 Սույն պայմանագիրը կնքված է Սպառողին էլեկտրական էներգիայի մատակարարման համար, որի էլեկտրատեղակայանքները միացված են ինչպես 6(10)կՎ, այնպես էլ ցածր լարման ցանցերին:

9.2 Սպառողի ստորաբաժանումների անվանումը ու կոդը և նրանց համապատասխան սպառարկող Մատակարար մասնաճյուղերի (Էլ.ցանցերի) ցուցակը նշված են սույն պայմանագրի Հավելված N4-ում:

9.3 Սույն պայմանագրով մատակարարը պարտավորվում է էլ.էներգիա մատակարարել սպառողին սույն պայմանագրին կից հավելված 4-ում ներկայացված ցանկում ընդգրկված նրա ստորաբաժանումներին, որում կարող են փոփոխություններ կատարվել սպառողի գրությունների հիման վրա:

9.4 Մատակարարը սույն պայմանագրից բխող իր պարտականությունները իրականացնում է իր կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան մասնաճյուղերի միջոցով:

9.5 Մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 11-ը Մատակարարը ներկայացնում է Սպառողին Հավելված N4-ում նշված բոլոր ստորաբաժանումների հաշվետու ամսվա էլ.էներգիայի ծախսերի, վճարումների և մնացորդների վերաբերյալ ամփոփ ակտը իրեն կողմից միակողմանի հաստատված (երկու օրինակից) և միաժամանակ ներկայացնում է էլեկտրոնային հարկային հաշիվ (ամփոփ):

9.6 Սպառողը ստուգում է ամփոփ ակտի ինֆորմացիայի ճշտությունը, և դիտողությունների բացակայության դեպքում ստորագրում է այն ստացման պահից 5 օրվա ընթացքում և մեկ օրինակը վերադարձնում է Մատակարարին:

9.7 Սպառողը մատակարարված էլ.էներգիայի դիմաց պարտավորվում է մատակարարին կենտրոնացված կարգով վճարել ամփոփ հաշիվը ստանալուց 7 բանկային օրվա ընթացքում և տալ համապատասխան թաշխում ըստ իր ստորաբաժանումների:

9.8 Վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում սպառողը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար չվճարած գումարի 0.1%-ի չափով, բայց ոչ ավելի, քան պարտքի ընդհանուր գումարի 10%-ը: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարած գումարը:

9.9 Կողմերը պայմանավորվում են, որ փոխադարձ հաշվարկի ստուգման ակտերը շարունակվելու են կնքվել Կողմերի ստորաբաժանումների կողմից:

9.10Կողմերը պայմանավորվում են, որ մինչև 01.05.2014թ. իրենց ստորաբաժանումների միջև նախկինում կնքված (հաստատված) N1, N2, N3 հավելվածները մնում են ուժի մեջ և կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.11.1 Միաժամանակ պայմանավորվում են N1, N2, N3 հավելվածների ճշգրտման անհրաժեշտության դեպքում, նրանց վերակնքումը իրականացնել ստորաբաժանումների կողմից:

9.11.2 Կողմերը նաև պայմանավորվում են N1, N2, N3 հավելվածների բնօրինակները պահպանել Կողմերի ստորաբաժանումներում, իսկ սույն պայմանագրի կողմերում պահպանել պատճենները:

9.12 Եթե կողմերից մեկը հայտնում է ցանկություն փոփոխություններ մտցնել սույն պայմանագրի 9-րդ կետում, ապա այդ մասին գրավոր տեղեկացնում է մյուս կողմին՝ նշելով փոփոխությունները:

9.13 Փոփոխությունները մտցվում են պայմանագրի մեջ լրացուցիչ համաձայնագրի ստորագրմամբ:

9.14 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով:

9.15 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 29.08.2013թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ և ՀՀ Գլխավոր դատախազության միջև կնքված N էՊ0056 էլ. մատակարարման պայմանագիրը:

10.Վեճերի լուծումը

10.1. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

10.2. Սույն պայմանագրի 10.1. կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

11.Պայմանագրի գործողությունը և լուծումը

11.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

11.2 Ղեկավարվելով Քաղ.օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ կետով կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի պայմանները նաև կիրառվում են 2014թ. մայիսի 1-ից մինչև պայմանագիր կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

11.3 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար::

11.4 Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-6(10) կՎ և բարձր լարման ցանցերից սնվող Սպառող (բացառությամբ՝ բնակչության)) պայմանագրի նոր օրինակների ձև հաստատելու կամ գործող օրինակների ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են

հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

11.5 Սույն պայմանագիրը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը

12.1. Հավելված N1 - Աեսորային հաշվառքի սարքի և առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ:

12.2.Հավելված N2 - Ակտ Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ:

12.3.Հավելված N3 - Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների վերաբերյալ:

12.4.ՀավելվածN4 - «ՀԷՑ» ՓԲԸ բաժանորդներ ՀՀ Գլխավոր դատախազության ստորաբաժանումների ցանկ:

Մատակարար՝		Սպառող՝	
հասցեն	ք.Երևան Ա.Արմենակյան 127	հասցեն	ք.Երևան Վ. Սարգսյան 5
Բանկ	«ՎՏԲ -Հայաստան Բանկ» ՓԲԸ	Բանկ	ՀՀ ֆին. նախ. աշխատակազ. գործառնական վարչություն
	160485110318		900011180081
Հ/հ	023-01520882	Հ/հ	02506634
ՀՎՀՀ	+37410 650 086	ՀՎՀՀ	
հեռախոս	office@ena.am	հեռախոս	
էլ.փոստի հասցեն՝	+374(10) 655 457	էլ.փոստի հասցեն՝	gnumner@genproc.am
Ֆաքս		Ֆաքս	
Գործունեության լիցենզիա	N 0092		

Գլխավոր տնօրեն

Ե.Բիբին

ստորագրություն

Կ.Տ

Աշխատակազմի ղեկավար

Հ.Նավասարդյան

ստորագրություն

Կ.Տ

Հավելված N 4
Էլեկտրական էներգիայի մատակարարման
(Մատակարար- 6(10) կՎ և բարձր լարման ցանցերից սնվող Սպառող
(բաժանորդների բնակչության) պայմանագրի

ՑԱՆԿ

«ՀԷՑ» ՓԲԸ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

N	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
1	005237	ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ	ԽՍՄՆ (Գործարանային)
2	008215	ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ	ԽՍՄՆ (Գործարանային)
3	002040	Ք.ԵՐԵՎԱՆԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ	Հարավ (Կենտրոն տարածք)
4	230170	ԿԵՆՏՐՈՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԴԱՏԱԽԱԶ.	Հարավ (Կենտրոն տարածք)
5	111464	ԷՐԵԲՈՒՆԻ ԵՎ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉ. ՇՐՋ.ԴԱՏԱԽԱԶ.	Հարավ (Էրեբունի տարածք)
6	333388	ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉ. ՇՐՋ.ԴԱՏԱԽԱԶ.	Հյուսիս (Նոր Նորք տարածք)
7	222488	ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ՔԱՆ. ՔԵՌ. ՎԱՐՉ. ՇՐՋ.ԴԱՏԱԽԱԶ.	Հյուսիս (Արաբկիր տարածք)
8	997583	ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ	Հյուսիս (Արաբկիր տարածք)
9	111415	ԱՋԱՓՆՅԱԿ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉ. ՇՐՋ.ԴԱՏԱԽԱԶ.	Արևմուտք (Մալաթիա տարածք)
10	900048	ՄԱԼԱԹԻԱ ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉ. ՇՐՋ. ԴԱՏԱԽԱԶ.	Արևմուտք (Մալաթիա տարածք)
11	005237	ՇԵՆԳԱՎԻԹԻ ՎԱՐՉ. ՇՐՋ.ԴԱՏԱԽԱԶ.	Արևմուտք (Շենգավիթ տարածք)
12	000005	ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԱՐՄԱՎԻՐԻ ՆՍՏ.	Մեծամոր («Արմավիր» էլ.ցանց)
13	100116	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ.	Մեծամոր («Աշտարակ» էլ.ցանց)
14	001501	ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽ.ԷՋՄԻԱԾՆԻ ՆՍՏ.	Մեծամոր («Էջմիածին» էլ.ցանց)
15	205043	ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԱԲՈՎՅԱՆԻ ՆՍՏ.	Գեղամա («Աբովյան» էլ.ցանց)
16	000335	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԳԱՎԱՌԻ ՆՍՏ.	Գեղամա («Գավառ» էլ.ցանց)
17	101628	ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՀՐԱԶԴԱՆԻ ՆՍՏ.	Գեղամա («Հրազդան» էլ.ցանց)
18	000038	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՄԱՐՏՈՒՆՈՒ ՆՍՏ.	Գեղամա («Մարտունի» էլ.ցանց)
19	000712	ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՆԱԻՐԻԻ ՆՍՏ.	Գեղամա («Նաիրի» էլ.ցանց)
20	000097	ՍԵՎԱՆԻ ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆ. ԴԱՏԱԽԱԶ.	Գեղամա («Սևան» էլ.ցանց)
21	000807	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՍԵՎԱՆԻ ՆՍՏ.	Գեղամա («Սևան» էլ.ցանց)
22	006094	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՎԱՐԴԵՆԻՍԻ ՆՍՏ.	Գեղամա («Վարդենիս» էլ.ցանց)
23	005067	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՃԱՄԲԱՐԱԿԻ ՆՍՏ.	Գեղամա («Ճամբարակ» էլ.ցանց)
24	210035	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԱՆԻԻ ՆՍՏ.	Ղարս («Անի» էլ.ցանց)
25	230052	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԱՐԹԻԿԻ ՆՍՏ.	Ղարս («Արթիկ» էլ.ցանց)
26	250005	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԱՇՈՑՔԻ ՆՍՏ.	Ղարս («Աշոցք» էլ.ցանց)
27	220077	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԱՄԱՍԻԱՅԻ ՆՍՏ.	Ղարս («Ամասիա» էլ.ցանց)
28	111093	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԳՅՈՒՄՐԻԻ ՆՍՏ.	Ղարս («Գյումրի» էլ.ցանց)
29	120062	ԳՅՈՒՄՐԻԻ ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆ. ԴԱՏԱԽԱԶ.	Ղարս («Գյումրի» էլ.ցանց)
30	000042	ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՍՊԻՏԱԿԻ ՆՍՏ.	Դեբեդ («Սպիտակ» էլ. ցանց)
31	000276	ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՆՍՏ.	Դեբեդ («Ստեփանավան» էլ. ցանց)
32	000077	ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՏԱՇԻՐԻ ՆՍՏ.	Դեբեդ («Տաշիր» էլ. ցանց)
33	000168	ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆՍՏ.	Դեբեդ («Թումանյան» էլ. ցանց)
34	000180	ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՎԱՆԱՁՈՐԻ ՆՍՏ.	Դեբեդ («Վանաձոր» էլ. ցանց)
35	000898	ԼՈՌՈՒ ԿԱՅԱԶ. ԶԻՆ. ԴԱՏԱԽԱԶ. ՎԱՆԱՁՈՐԻ ՆՍՏ.	Դեբեդ («Վանաձոր» էլ. ցանց)
36	000134	ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԲԵՐԴԻ ՆՍՏ.	Աղստև («Բերդ» էլ. ցանց)
37	000133	ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԴԻԼԻՋԱՆԻ ՆՍՏ.	Աղստև («Դիլիջան» էլ. ցանց)
38	012921	ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԻՋԵՎԱՆԻ ՆՍՏ.	Աղստև («Իջևան» էլ. ցանց)
39	014556	ԼՈՌՈՒ ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆ.ԴԱՏԱԽԱԶ. ԻՋԵՎԱՆԻ ՆՍՏ.	Աղստև («Իջևան» էլ. ցանց)
40	000171	ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՆՍՏ.	Աղստև («Նոյեմբերյան» էլ. ցանց)
41	001192	ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԱՐԱՐԱՏԻ ՆՍՏ.	Արաքս («Արարատ» էլ.ցանց)
42	000156	ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԱՐՏԱՇԱՏԻ ՆՍՏ.	Արաքս («Արտաշատ» էլ.ցանց)
43	000305	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԵՂԵԳՆ. ՆՍՏ.	Արաքս («Եղեգնաձոր» էլ.ցանց)
44	002315	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԴԱՏԱԽԱԶ.ՎԱՅՔԻ ՆՍՏ.	Արաքս («Արփա» Գ.ս)
45	000415	ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԿԱՅԱԶ. ԶԻՆ. ԴԱՏԱԽԱԶ.ԵՂԵԳՆ. ՆՍՏ.	Արաքս («Եղեգնաձոր» էլ.ցանց)
46	000455	ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ.ՄԱՍԻՍԻ ՆՍՏ.	Արաքս («Մասիս» էլ.ցանց)
47	000165	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԳՈՐԻՍԻ ՆՍՏ.	Տաթև («Գորիս» էլ.ցանց)
48	000410	ՎԱՆԳԵԶՈՒՐԻ ԿԱՅԱԶ. ԴԱՏԱԽԱԶ. ԳՈՐԻՍԻ ՆՍՏ.	Տաթև («Գորիս» էլ.ցանց)
49	000142	ՎԱՆԳԵԶՈՒՐԻ ԿԱՅԱԶ.ԴԱՏԱԽԱԶ. ԿԱՊԱՆԻ ՆՍՏ.	Տաթև («Կապան» էլ.ցանց)
50	000152	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ԿԱՊԱՆԻ ՆՍՏ.	Տաթև («Կապան» էլ.ցանց)
51	000039	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՄԵՂՐԻԻ ՆՍՏ.	Տաթև («Մեղրի» էլ.ցանց)
52	000226	ԵՂԵԳՆ. ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆ.ԴԱՏԱԽԱԶ. ՍԻՍԻԱՆԻ ՆՍՏ.	Տաթև («Սիսիան» էլ.ցանց)
53	000384	ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶ. ՍԻՍԻԱՆԻ ՆՍՏ.	Տաթև («Սիսիան» էլ.ցանց)

ՄԱՏԱԿԱՐԱՐ	ՍՊԱՌՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ	ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
______ Ե.ԲԻԲԻՆ	______ Հ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ